

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ
ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

ՄԿՐՏՉՅԱՆ Գ. Գ.*

Գեղարքունիքի մարզը Հայաստանի ամենախիտ բնակչություն ունեցող տարածքն է: Մարզում կա 92 բնակավայր, որոնք խմբավորվում են **Գավառի, Ճամբարակի** (նախկին Կրասնոսելսկ), **Մարտունու, Սևանի և Վարդենիսի** տարածաշրջաններում: **Գավառի** տարածաշրջանն ունի 12 խոսվածք (**Գավառ քաղաքը և Գանձակ, Ծաղկաշեն, Մարուխան, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Կարմիրգյուղ, Լորատու, Հայրավանք, Բերդկունք, Ծովագարդ, Լճափ** համայնքները), **Սևանը՝ 11** (**Սևան քաղաքը և Զովաբեր, Դումաշեն, Ծաղկունք, Գեղամավան, Վարսեր, Լճաշեն, Չկալովկա, Լորաշեն, Ծովագյուղ, Մեյրնոտկա** համայնքները), **Մարտունին՝ 17** (**Մարտունի քաղաքը և Աստղածոր, Արծվանիստ, Գեղ-հովիտ, Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն, Երանոս, Զոլաքար, Թագա-գյուղ, Լիճք, Ծակքար, Ծովինար, Զորագյուղ, Մադինա, Վաղաշեն, Վարդածոր, Վարդենիկ** համայնքները), **Ճամբարակը՝ 16** (**Ճամբարակ քա-ղաքը և Աղբերք, Անտառամեջ, Արտանիշ, Այգուտ, Գետիկ, Դպրաբակ, Դրախտիկ, Թթուջուր, Կալավան, Զորավանք, Մարտունի, Շորժա, Ջիլ, Վահան, Արծվաշեն** համայնքները), **Վարդենիսը՝ 36** (**Վարդենիս քաղաքը և Ազատ, Ակունք, Ախպրածոր, Այրք, Ավագան, Արեգունի, Արփունք, Գեղամասար, Գեղամաբակ, Գեղաքար, Դարանակ, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծափաթաղ, Ծովակ, Կարճաղբյուր, Կախակն, Կուտական, Կութ, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Փոքր Մասրիկ, Լորակերտ, Լորաբակ, Շատջրեք, Ներքին Շորժա, Վերին Շորժա, Շատվան, Զաղացածոր, Սոթք, Վանեվան, Տորֆավան, Տրետունք, Փամբակ** համայնքները): Գեղարքունիքի մարզը, պատմական իրադարձություններով պայմանավորված, մինչև XIX դ. հայաթափված է եղել: Համաձայն ժողովրդագրական տվյալների՝ տարածաշրջանում հայերի վերաբնակեցումն ընթացել է երեք փուլով՝

ա) 1828-1830 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Գեղարքունիքում են բնակեցվում շուրջ տասը հազար հայեր՝ ներգաղթած Արևմտյան Հայաստանի բազմաթիվ բնակավայրերից՝ Ալաշկերտից, Մուշից, Հին Բայազետից, Դիադինից, Վանից, Կարսից, Մակուից և այլ վայրերից:

* garik.mkrtchyan@ysu.am Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ՝ № SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակում:

բ) Կենտրոնական Հայաստանի պատմական տարբեր տարածքներից ոչ մեծաթիվ ներգաղթյալներ Սևանի ավազանի բնակավայրեր են հանգրվանել 1914-1922 թթ. ընթացքում:

գ) 1988-1990-ական թթ. Ադրբեջանից բռնագաղթած հազարավոր հայեր ապաստանում են հատկապես Ճամբարակի ու Վարդենիսի տարածաշրջաններում և այսօր զբաղեցնում են համայնքների մեծ մասը:

Ժողովրդագրական և հանրալեզվաբանական տվյալները ցույց են տալիս, որ մինչև 1830 թ. միայն Մարտունու **Շրանոս** գյուղում են ապրել 13 տեղաբնիկ ընտանիք, իսկ Ջարգեբիլ գյուղում՝ երկու տեղաբնիկ ընտանիք՝ 9 անդամով¹: 1842 թ. մարդահամարով Ջարգեբիլում այլևս հայեր չկային: Լեզվական տվյալների բացակայության պատճառով հնարավոր չէ բնութագրել տեղաբնիկների լեզվական համակարգերը: Ժամանակի ընթացքում նրանք ձուլվել են եկվորներին:

Գեղարքունիքի մարզի խոսվածքները միատարր չեն: Դա երևում է մարզի խոսվածքների ձայնավորների և երկբարբառների առանձնահատկությունները քննելիս²:

Գեղարքունիքի մարզի դիտարկված խոսվածքներում առկա են **ա, օ, ու, ի, է, ը, ւն, ւն, օն, ւն, ւն** ձայնավորները: Այս հնչյուններից էտալոնային են **ա, է, օ, ու, ի, ը** ձայնավորները, քանի որ կատարում են հնչույթային գործառույթ²: Դրանք հանդես են գալիս բառի բոլոր դիրքերում, բառերի տարատեսակ դիրքային հակադրություններում իրականացնում են իմաստատարբերակիչ գործառույթ, իսկ մյուս՝ **ւն, օն, ուն, ւն, ւն** ձայնավորները **ա, օ, ու** ձայնավորների դիրքային, արտասանական ազատ տարբերակներն են, բառի կազմում ունեն գործածության որոշակի սահմանափակություն: Գործառույթ են հնչյունական որոշակի դիրքերում և իրենց ամենամերձավոր հնչյուններին փոխարինելիս հիմնականում չեն ձևավորում իմաստատարբերակիչ հակադրություններ, հետևաբար համարվում են ա հնչույթի դիրքային տարբերակները: Սակայն Վ. Կատվայանը **ա, ւն, ւն** ձայնավորների՝ իմաստատարբերակիչ հակադրություններ հայտաբերող փաստեր է վկայում Գավառի տարա-ծաշրջանում գործող Բայազետի բարբառի հնչյունական համակարգի առանձնահատկություններին նվիր-

¹ Մարտիրոսյան Վ., Վերին Գետաշեն (մարդիկ, դեպքեր, փաստեր, ճակատագրեր), Ե., 2014, էջ 185-186:

² Համաժամանակյա չափանիշներով գուգադրական քննության մեջ չենք ներառել **Արցախի** խոսվածքների առանձնահատկությունները **Ճամբարակի** և **Վարդենիսի** տարածաշրջաններում:

² Աղայան Էդ., Գրաբարի քերականություն, Գիրք Ա, Հնչյունաբանություն, Ե., 1964, էջ 81-102:

ված ուսումնասիրության մեջ՝ **լաբել** (հետապնդել)-**լարել** (գործի դնել), **շան** (գրպարտություն) - **շան** (գունդ) և այլն³:

Մարզի խոսվածքներում գործող ձայնավոր հնչյուններն ունեն որոշակի տարածքային բաշխվածություն: Էտալոնային ձայնավորները հատուկ են տարածքի բոլոր խոսվածքներին: Այսպես, **ի, է, ը** ձայնավորներն ունեն նույն հատկանիշները և դիտարկման արժանի դրսևորումներ չունեն, իրենց արտաբերական ու ֆիզիկական հատկանիշներով չեն տարբերվում գրական հայերենի **ի, է, ը** ձայնավորներից⁴: **Ա, օ, ու** ձայնավոր հնչյունների գործառության սահմանափակություն կա **Սևանի, Գավառի, Վարդենիսի** տարածաշրջանների խոսվածքներում: Այս խոսվածքների հնչյունական որոշակի դիրքերում **ա, օ, ու** հնչյունները ներկայանում են իրենց դիքային և որակական տարբերակներով:

Գեղարքունիքի մարզի խոսվածքներում **ա** ձայնավորը պատմականորեն ձևավորել է քառանդամ հակադրություն: **Ա**-ն և նրա տարբերակները՝ **ա/ա/ա**, ստորին բարձրացման հնչյուններ են: Դրանց տարբերությունը դրսևորվում է միայն ըստ արտաբերման տեղի. **ա**-ն ստորին բարձրացման հետևալեզվային, **ա/ա**-ն ստորին բարձրացման առաջնալեզվային հնչյուններ են՝ ուժեղ և թույլ քմայնություններով, իսկ **ա**-ն բնութագրվում է որպես ստորին բարձրացման այնպիսի հնչյուն, որի «...արտասանության սկզբում շրթունքները լարվում են և ձգվում դեպի առաջ, ձևավորվում է շրթնային հնչարան, որի հետևանքով ստացվում է սերտ **օա** արտասանություն⁵: Կարծում ենք՝ կոշտ, շրթնայնացման որոշակի երանգ⁶ և արտասանական որոշակի լարվածություն ունեցող **ա**-ի արտաբերման հարցում դեր են խաղում լեզվի և՛ հետին, և՛ առաջին հատվածները: Լեզվաբանության մեջ այս **ա**-ն բնութագրվում է նաև որպես կոկորդային հնչյուն⁷:

Եթե **Մարտունու** տարածաշրջանի Մշո շերտը ներկայացնող խոսվածքների բառասկզբի և բառամիջի բնիկ, ինչպես նաև արևելյան լեզուներից կատարված փոխառյալ բառերում կան **ա** հնչյուններ՝ **մարդ, ձ'աք, թամբ, լաց** և այլն, ապա **Գավառի, Սևանի, Վարդենիսի** խոսվածքներում կան քմային **ա**-եր՝ **մարդ, ձ'աք, թամբ, լաց, բախտ** և այլն: Մարտունու խոսվածքները բնութագրվում են քմային այնպիսի ^օ ձայնավորի գոր-

³ Կատվայան Վ., Հայ բարբառագիտության հարցեր, Ե., 2014, էջ 52-53:

⁴ Խաչատրյան Ա., Ժամանակակից հայերենի հնչյութաբանություն, Ե., 1988, էջ 152-154, 158-159:

⁵ Կատվայան Վ., նշվ. աշխ., էջ 37:

⁶ Մուրադյան Հ., Հայոց լեզվի պատմական քերականություն, հ. 1, Հնչյունաբանություն, Ե., 1982, էջ 34:

⁷ Բաղդամյան Ռ., Հայերեն բարբառներ, Սևանա լճի ավազանի խոսվածքները, Ե., 1972, էջ 14:

ծածուկությամբ, որի քմայնությունը թույլ է, և կա մասնակի առաջնալեզվայնություն: Հստ որակական այս հատկանիշի՝ երկու տարածքների քմայնների հնչումը համադրելիս ուժեղ և թույլ քմայնության հակադրություն է ստեղծվել Մարտունու և մյուս տարածաշրջանների խոսվածքների միջև: Եթե **Վարդենիսի, Սևանի, Գավառի** խոսվածքների փոխառյալ բառերում կան քմային ձայնավորներ՝ **թամուզ, թագան, նաֆտ, թասիբ, մայլան** և այլն, ապա Մարտունու խոսվածքներում այդ քմայնությունը թույլ է և հանդիպում է սակավաթիվ բառերում՝ **թամուզ**,

թագա, նաֆտ, թասիբ, մայլա և այլն: Այս երևույթը պետք է օրինաչափ համարել: Մշո բարբառում ու նրա որոշ խոսվածքներում քմայնացման թույլ երանգ ունենալը միայն մեր տեսակետը չէ: Բարբառագետ Ժ. Միքայելյանն իր հետազոտության մեջ նույնպես վկայել է այդ մասին⁸՝ հաշվի առնելով այն, որ քմայնացման երևույթը գործում է Մշո բարբառի **Արծկեի** և **Արձեշի** խոսվածքներում, որը, ամենայն հավանականությամբ, Վանի բարբառի ազդեցության հետևանք է: Կարծում ենք՝ **Արծկեի** և **Արձեշի** խոսվածքներում եղած քմային հնչյուններն էլ ժամանակի ընթացքում փոխանցվել են Մշո բարբառի մյուս խոսվածքներին:

Թույլ և ուժեղ քմային ձայնավորներ կան ոչ միայն փոխառյալ, այլև՝ ընդհանուր հայերենյան որոշ բառերում, մասնավորապես՝ ձայնեղ հագագից հետո եղող դիրքում՝ **առշի, առնէ, առու** և այլն: Այս երևույթը կա՛մ ներքին օրինաչափությամբ է պայմանավորված, կա՛մ այլ բարբառների ազդեցության հետևանք է: Վերոնշյալ բառերը Գավառի, Սևանի և Վարդենիսի տարածաշրջանների խոսվածքներում ներկայանում են ուժեղ քմայնությամբ: Ս. Թափալցյան-Բաղդասարյանը Մշո բարբառում քմայնության երևույթը տեսնում է մի քանի փոխառյալ բառերում՝ **մածա** «խելք, ուղեղ», **մայթ** «դիակ», **մագար** «արդյոք, միթե», **մարանշավել** «կիկլոպ», **բալաքա** «չալ»⁹ և այլն: Այս պահի դրությամբ վերոբերյալ բառամիավորները մշեցիների բառապաշարում բացակայում են: Բացառություն է միայն **բալաք** բառը, այն էլ՝ առանց քմայնության: Կարծում ենք՝ Մշո բարբառում ու նրա խոսվածքներում թույլ քմայնությունը միջնորդավորված ազդեցություն է՝ անցած հարակից, ուժեղ քմայնություն ունեցող բարբառներից: Սակայն նկատենք, որ ուժեղ և թույլ քմայնությունները հնչյունահնչությային էական նշանակություն չունեն. նրանք ընդամենը գործածվում են տարբեր տարածքներում¹⁰: Ի դեպ, Հ. Մուրադյանը ևս Մշո բարբառում ընդունում է քմային ան ձայնավորի գոյությունը¹¹:

⁸ Միքայելյան Ժ., Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները: Համաժամանակյա և տարաժամանակյա քննություն, Ե., 2009, էջ 31:

⁹ Բաղդասարյան-Թափալցյան Ս., Մշո բարբառը, Ե., 1958, Ե., էջ 17:

¹⁰ Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 44:

¹¹ Նույն տեղում, էջ 45:

Եթե **Մարտունու** խոսվածքներում բառակազմի բոլոր դիրքերում որոշ բացառություններով կա **ա** ձայնավոր¹², իսկ **Սևանի**, **Վարդենիսի** տարածաշրջանների՝ հատկապես ընդհանուրհայերենյան բառերի առաջին և երկրորդ վանկերում՝ **ա** ձայնավոր, ապա **Գավառի** խոսվածքներում կան շրթնային **ա** և քմային **ա** ձայնավորներ: Շրթնային **ա**-ն մեծ տարածում ունի Գավառի խոսվածքներում: Հնչյունական այս հատկանիշով է, որ Գավառի խոսվածքները տարբերակվում են մյուս շրջանների խոսվածքներից ու բարբառներից:

Գավառի խոսվածքներում **ա** հնչյունը լրացուցիչ բաշխման հարաբերության մեջ է գտնվում մերձավոր **ա**/**ա** հնչյունների հետ: Հ. Մուրադյանը, բնութագրելով **ա** հնչյունի գործառական առանձնահատկությունները, նշում է, որ այն «կարող է հանդես գալ համարյա բոլոր դիրքերում»¹³, սակայն Բայազետի բարբառը կրող և հետագոտող Վ. Կատվալյանն **ա** հնչյունի գործառման համար նշում է բառերի հետևյալ դիրքերը¹⁴, որոնք ընդգրկում են և՛ ընդհանուրհայերենյան, և՛ փոխառյալ բառաշերտերը՝ ա) բառասկզբում՝ **օմպ**, **ամօթ**, **ամիկ**, **անջախ**, **ազար** և այլն, բ) բառամիջում տարբեր որակի բաղաձայն հնչյունների միջև՝ **սաթ**, **խաթսե**, **խիվանդ**, **իմալ**, **ծանդր**, **պմոլել**, **պախել** և այլն: Սևանի տարածաշրջանի խոսվածքները հայտնաբերում են մի դրսևորում ևս: Բարբառագետ Ռ. Բաղրամյանը գրում է, որ Մակուի խոսվածքը ներկայացնող Սևանի խոսվածքներում նույնպես հանդիպում են շրթնային **ա**-ի գործածության դեպքեր¹⁵: Հավանաբար, Գավառի խոսվածքների ազդեցությամբ է շրթնային **ա**-ն գործածվում Սևանի խոսվածքներում և, կարծում ենք՝ այս երևույթը նոր իրողություն է:

Քմային **ա** ձայնավորը Գավառի շրջանի խոսվածքներում մեծ մասամբ գործածվում է փոխառյալ բառերում, ընդ որում՝ հանդիպում է և՛ բառասկզբում, և՛ բառամիջում, և՛ բառավերջում՝ **ալիք**, **զադա**, **ռանգ**, **խանաք**, **կարիք**, **թալաք**, **նօքաք**, **մասալա** և այլն: Քմայնություն կա նաև բարբառային **զանել** բառում: Վ. Կատվալյանը գտնում է, որ քմային **ա**-ն Բայազետի բարբառի արտաբերական յուրահատկություններով պայմանավորված հնչյուն չէ, այլ օտարամուտ է և ունի առանձին հնչույթի արժեք որոշ դրսևորումներում: Ասվածը հիմնավորելու համար բերում է հետևյալ օրինակները՝ **բանդ** (պատնեշ)-**բանդ** (կալանատուն), **թաթ** (ձեռքի թաթ)-**թաթ** (անհասկացող), **թափուկ** (անասունի ոտքի հարված) - **թափուկ** (թափված)¹⁶ և այլն: Գավառի խոսվածքներում **ա** հնչյունի գործառման

¹² Բաղդասարյան-Թափալցյան Ս., նշվ. աշխ., էջ 15-17:

¹³ Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 41:

¹⁴ Կատվալյան Վ., նշվ. աշխ., էջ 39:

¹⁵ Բաղրամյան Ռ., նշվ. աշխ., էջ 93:

¹⁶ Կատվալյան Վ., նշվ. աշխ., էջ 52-53:

համար սովորական դիրք է միավանկ, երկվանկ և բազմավանկ բառերի բառամեջը՝ տարբեր որակի բաղաձայնների միջև՝ **քար, լակ, խա, Յան-բակ, բանգաս, բոստան, ռաֆադա** և այլն: Գավառի խոսվածքներում **ա** հնչյունը սակավաթիվ դեպքերում հանդիպում է նաև բառասկզբում՝ **ախ, այտենց, այնենց** և այլն:

Վարդենիսի խոսվածքների հատկապես Մշո շերտում (**Մեծ Մասրիկ, Փոքր Մասրիկ, Ախպրաձոր, Մաքենիս** և այլն) սովորական են **ա** հնչյունի գործածությունները, իսկ մյուս՝ Դիադինի շերտում **ա**-ն համապատասխան դիրքերում ներկայանում է քմային **օ** ձայնավորով: Հավելենք, որ Վարդենիսի տարածաշրջանում Դիադինի բարբառի ազդեցությամբ քմային ձայնավորների գործածություններ կան նաև Մշո շերտի խոսվածքներում: Այս իրողությունը համատեղ կենսակերպի, գերիշխող բարբառի ազդեցության հետևանք է:

Ինչպես փաստերն են ցույց տալիս, մարզի բոլոր խոսվածքները տարբերվում են բառասկզբի ու բառամիջի դիրքերում **ա**-ի և նրա դիրքային ու որակական տարբերակների գործածություններով: Օրինակ՝ Մարտունու **Վերին Գետաշենի, Ներքին Գետաշենի, Լիճքի** և մի շարք այլ խոսվածքներ տարբերվում են Գավառի տարածաշրջանի **Սարուխանի, Լանջաղբյուրի, Նորատուսի** և մյուս խոսվածքներից **օ** ձայնավոր չունենալու հատկանիշով: Նմանատիպ համեմատությունները վկայում են, որ խոսվածքների ընդհանրություններն ու տարբերությունները հիմնականում պայմանավորված են նրանց՝ տարբեր բարբառային միավորների խոսվածքներ լինելով: Սակայն բառավերջի վանկում ի հայտ եկող սովորական **ա**-ի նույնությամբ (թեև, ինչպես տեսանք, կան որոշ բացառություններ **Սևանի, Գավառի** և **Վարդենիսի** խոսվածքներում հատկապես քմային **օ**-ի գործածության դեպքերում) և ժամանակակից արտաքին և ներքին փոխառություններում գործառող **ա** հնչյուններով մարզի բոլոր խոսվածքները միավորվում են:

Գեղարքունիքի մարզի խոսվածքներում երկանդամ հակադրությամբ են ներկայանում **ու, օ** ձայնավորները: **Մարտունու, Սևանի, Գավառի, Վարդենիսի** խոսվածքների՝ հատկապես արևելյան լեզուներից կատարված փոխառյալ բառերի առաջին վանկերում ի հայտ եկող էտալոնային **օ, ու** ձայնավորների դիմաց Գավառի տարածաշրջանի **Նորատուսի, Սևանի շրջանի Դմաշենի** խոսվածքներում և Վարդենիսի՝ Դիադինի շերտը ներկայացնող խոսվածքներում կան քմային **օ, ու** ձայնավորներ: Սակավադեպ կիրառություններում գործածվող այդ հնչյուններն ինչ-որ մի պատմական շրջանում հայերենին են անցել հատկապես նորագույն փոխառությունների միջոցով: Ընդ որում, քմային **օ**-ն հազվադեպ հանդիպում է նաև ընդհանուրհայերենյան բառերում, իսկ **ու**-ն՝ միայն արևելյան լեզուներից կատարված փոխառություններում՝ **քուֆտա, քուչա, քուֆուր,**

քօլ, քօս, չօլ, բօլ և այլն: Երևույթը կա նաև բնիկ **քըրէլ, քնլ** բառերում, որը, հնարավոր է, փոխառյալ բառերի համաբանությամբ կատարված իրողություն է: Քմային **նն**-ն, **ծ**-ն անկախ հնչույթներ չեն և դիտվում են որպես **ու, օ** հնչյունների դիրքային ազատ տարբերակներ: Բառավերջի վանկում, ընդհանուր հայերենյան բոլոր բառերում և նորագույն արտաքին, ներքին փոխառություններում գործառող էտալոնային **օ, ու** ձայնավորներով մարզի խոսվածքները միավորվում են: Մյուս շերտի խոսվածքներում հանդիպող քմային **նն** և **ծ** ձայնավորների սակավադեպ գործածություններն այդ հնչյուններն ունեցող խոսվածքների ուղղակի ազդեցության հետևանք են:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ Գեղարքունիքի մարզի խոսվածքներում գործում են նաև ուժգնացող (բարձրացող) երկրաբառներ և երկհնչյուններ: Երկրաբառների գործածության դիրքը բառամիջի փակ վանկն է, իսկ երկհնչյուններինը՝ բառասկզբը: Բառասկզբում գործառում են **Վօ** և **Իէ** երկհնչյունները, որոնք երբեմնի **Վօ, Իէ** բարձրացող երկրաբառների պատմական զարգացումն են վկայում. պարզ ձայնավորի երկհնչյունային արտասանությունը կատարվել է **ե** և **ո** ձայնավորների երկրաբառացմամբ¹⁷: Բառասկզբի դիրքում այդ երկհնչյունները հանդիպում են միավանկ և բազմավանկ բառերում՝ **Վօրդ, Վօսկի, Վօսպ, Իէրգ, Իէրկաթ, Իէրագ** և այլն: Տարածքի խոսվածքներում կան **ւօ** եռաբարբառի գործառման փաստեր՝ **ւօօնփ, ւօօնց, ւօօնց, Խէգ, Խէփ** և այլն, որը, որպես գործող հնչյունական իրողություն, վկայում է **ւ, Խ** երկհնչյունների պատմական զարգացման ընթացքի մասին: Ի դեպ, Մշո բարբառում Ս. Բաղդասարյան-Թափալցյանը միավանկ բառերի սկզբում **ե, ո** ձայնավորների այսպիսի հնչումն օրինաչափ երևույթ է համարում¹⁸: Ընդ որում, բազմավանկ բառերում երևույթը գործառել է միավանկ բառերի համաբանությամբ: Բառասկզբի դիրքում այս երկհնչյունների գոյությունը պատմական հնչյունափոխության հետևանք է:

Գրեթե բոլոր խոսվածքներում մեզ հանդիպել են նման հնչյունափոխություն ունեցող բառերի ոչ երկրաբառային տարբերակները՝ **օսկի, օջիլ, օսկօռ, օգնի, օլըրէլ, օջխար, էղան, էրագ, էրամ, էկա, էրինջ, էգ** և այլն: Այսպիսի փաստերով վերականգնվում է բառասկզբի երկրաբառների՝ փակ ձայնավոր, ոչ երկրաբառային միավոր լինելու նախնական հատկանիշը, որը նրանք ունեցել են ինչ-որ մի պատմական ժամանակահատվածում: Բառամիջի շեշտակիր վանկերում կան բարձրացող երկու երկրաբառներ՝ **Իէ, ոօ**՝ **մԻէծ, մԻէնք, փԻէդ, ձԻէր, կԻէխտ, տԻէխ, փօօր, փօօլ, խօօլ, լօօնդ, նօօր, իւօօլ** և այլն: Գեղարքունիքի տարածքի խոսվածքների

¹⁷ Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 94:

¹⁸ Բաղդասարյան-Թափալցյան Ս. Հ., նշվ. աշխ., էջ 13:

բառամիջի շեշտված երկբարբառներն ունեն ուժեղ, ընդգծված արտաբերում: Ի դեպ, նշված երկբարբառների մեջ երկրորդ ձայնավորները շեշտվում են ավելի ուժեղ, քան առաջինները: Հավելենք, որ միավանկ բառերի բառասկզբում այս երկբարբառների գոյությունն ապացուցում է բառասկզբի դիրքի **Վ, Լ** երկհնչյունների երբեմնի երկբարբառային արտասանություն ունենալը, քանի որ, ինչպես հետազոտողներն են հիմնավորում, հայերենում **ն** և **ե** ձայնավորների երկբարբառացումը շեշտյալ վանկերում սկզբնապես եղել է առանց դիրքի սահմանափակման՝ ընդգրկելով թե՛ բառասկիզբը, թե՛ բառավերջը¹⁹: Գավառի և Սևանի տարածաշրջանի խոսվածքներում հանդիպում են նաև **ա՛լ, ու՞, օ՛** երկբարբառները՝ **մէրա՛նք, գ՛օհոտ, բ՛ուոտ, բ՛օխկ** և այլն: Բառամիջի դիրքում բարձրացող երկբարբառների գործառումը նկատվում է բացառապես միավանկ բառերում: Դրանք երկբարբառ են շեշտված վանկում, իսկ շեշտազրկվելիս վերածվում են պարզ ձայնավորների՝ **փեղանօծ, ձէնօնծ, փօրացավ, գ՛օղընուգ, խօզուտէն** և այլն: Նշված երկբարբառների գործածությամբ միավորվում են քննարկված բոլոր խոսվածքները: Եռաբարբառներ չկան բառամիջի դիրքում:

Այսպիսով, համաժամանակյա և ընկալողական մեթոդներով կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ Գեղարքունիքի մարզի խոսվածքներում կան տասնմեկ ձայնավոր՝ **ա, օ, ու, ի, է, ը, ւ, օ, ւ, ւ, ւ** և երկու երկհնչյուն և երկու երկբարբառ՝ **Վ, Լ, Խ, Խ**: Ձայնավոր հնչյուններից 6-ը՝ **ա, օ, ու, ի, է, ը**, մեր լեզվի հնչյունական համակարգում էտալոնային են, քանի որ իմաստատարբերակիչ գործառույթ ունեն բառիմաստային հակադրություններում, ուստի և՛ անկախ հնչույթներ են: Այս հատկանիշից զուրկ են քմայնություն և շրթնայնություն ունեցող **ւ, օ, ւ, ւ, ւ** հնչյունները: Դրանք էտալոնային հնչյունների դիրքային, որակական, ոչ իմաստային հակադրություն ստեղծող տարբերակներ են և իմաստային հակադրության համակարգային փաստեր չեն հայտաբերում՝ բացառությամբ մի քանի դեպքերի:

¹⁹ Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 94:

**РЕГИОНАЛЬНАЯ ХАРАКТЕРИСТИКА ГЛАСНЫХ
И ДИФТОНГОВ В ДИАЛЕКТАХ ГЕГАРКУНИКСКОЙ
ОБЛАСТИ**

МКРТЧЯН Г. Г.

Резюме

Звуки *u, o, n, h, t, p* являются эталонными гласными. Остальные гласные – это позиционные варианты эталонных гласных, имеющие ограниченное применение в составе конкретного слова. Эталонные гласные характерны для всех диалектов. Губной звук *ũ* используется в Гаваре, небные гласные *ü, ö, ñ, ɥ* – в диалектах Гавара, Севана, Вардениса и Чамбарака. В диалектах Мартунинского района отсутствуют небные гласные, столь не характерные для мушского диалекта.

В региональных диалектах употребляются также дифтонги.

**THE REGIONAL CHARACTERIZATION OF VOWELS AND
DIPHTHONGS IN THE DIALECTS OF GEGHARKUNIK REGION**

G. MKRTCHYAN

Abstract

The vowels *u, o, n, h, t, p* are considered to be etalon sounds. The other vowels are variants of the etalon vowels, the usage of which is somewhat restricted in the word system. The etalon vowels are peculiar to all dialects. The labial sound *ũ* is peculiar to Gavar dialect and the palatal sounds *ü, ö, ñ, ɥ* that to Gavar, Sevan, Vardenis and Jambarak dialects. The regional dialects of Martuni district have no systematic use of palatal vowels. They are not mostly used by the dialect users of Msho dialect.

There are also diphthongs in the dialects of the region.